

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2014 թվականի N 197-Ն

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ (ՆԱԽԱԳԾՄԱՆ) ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Հաստատել բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Տ. Սարգսյան

2014 թ. մարտի 5
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
փետրվարի 27-ի N 197-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ (ՆԱԽԱԳԾՄԱՆ)

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեների միջոցների հաշվին իրականացվող բնապահպանական ծրագրերի (այսուհետ՝ ծրագիր) մշակման (նախագծման) (այսուհետ՝ մշակման) ընթացակարգերի հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագիրը մշակվում է նախապես հաստատված տեխնիկական առաջադրանքի հիման վրա, որը ներառում է կառուցվածքային նշված ենթաբաժինները՝

- 1) ծրագրի նպատակը.
- 2) ծրագրի իրավական հիմքերը.
- 3) պետական մարմնի լիազորությունները ծրագրի իրականացման հարցում.
- 4) ծրագրի շահառուները և մատուցվող ծառայությունները.
- 5) ծրագրի խնդիրները և դրանց կապը ծրագրի նպատակի հետ.
- 6) ծրագրի կառուցվածքը (միջոցառումները).
- 7) ծրագրի իրականացման եղանակը (միջոցները և իրականացնող կազմակերպությունների շրջանակը).

8) ծրագրի կատարողական ցուցանիշները (ծավալային ցուցանիշները բնափրկելու ծավալներով՝ ըստ առանձին միջոցառումների կամ ենթածրագրերի)՝

- ա. վերջնական արդյունքը,
- բ. ուղղակի արդյունքները.

9) ծրագրի իրականացման նկարագրությունը՝

ա. ծրագրի ներկա վիճակի նկարագրությունը,

բ. ծրագրի վերջնական արդյունքների պլանավորումը/կանխատեսումը՝ ըստ իրականացման փուլերի (Ժամանակահատվածների):

3. Ծրագրի ֆինանսական արժեքը գնահատվում է ծրագրի նախահաշվային արժեքի հաշվարկման միջոցով: Նախահաշվային ծախսերը հաշվարկվում են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված նորմաների հիման վրա, այդ թվում՝

ա. պետական անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման և անտառապատման, առանձին աշխատանքների կատարման ծախսերը հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 27-ի N 684-Ն որոշմամբ հաստատված՝ պետական անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման և անտառապատման, առանձին աշխատանքների կատարման ծախսերի նորմատիվների հիման վրա,

բ. ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 809-Ն որոշմամբ հաստատված՝ Սևանա լճի անտառտնկարկների մաքրման առանձին գործողությունների նորմաների հիման վրա,

գ. ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշմամբ հաստատված՝ գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի փետրվարի 15-ի N 19-Ն հրամանով հաստատված հաշվարկման կարգերի համաձայն:

2) թեմատիկ բնույթի բնապահպանական ծրագրերի գծով ծախսերը հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$ԱԹԲԾ = \sum U_i \times U_{U_i} \times (ԳՆ \times ԳԾ \times ԳՎ \times ԳՇ) + Հ$$

որտեղ՝

U_i-ն՝ i-րդ ծրագրային աշխատանքներ իրականացնողի ամսական դրույքաչափն է (որոշվում է մասնագետների համար Հայաստանի Հանրապետության նվազագույն ամսական աշխատավարձի 224.9 տոկոսի չափով, իսկ տեխսպասարկող անձնակազմի համար՝ Հայաստանի Հանրապետության նվազագույն ամսական աշխատավարձի 132.3 տոկոսի չափով),

U_{U_i}-ն՝ i-րդ մասնագետի աշխատանքի աշխատատարությունն է՝ մարդ/ամիս (որոշվում է ելնելով աշխատանքի ծավալից),

ԳՆ-ն՝ նյութածախսի գործակիցն է, որը հավասար է 1.05,

ԳԾ-ն՝ ծառայությունների ծախսի գործակիցն է, որը հավասար է 1.1,

ԳՎ-ն՝ վերադիր ծախսերի գործակիցն է, որը հավասար է 1.053,

ԳՇ-ն՝ շահութաբերության մակարդակի գործակիցն է, որը հավասար է 1.1,

Հ-ն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հարկերն են, որոնք հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված նորմատիվների բացակայության դեպքերում ծրագրերի նախահաշվային արժեքը հաշվարկվում է տվյալ տարվա բյուջետային ծախսերի հաշվարկման համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից հաստատված պետական

բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների շրջանակներում ոլորտային հայտերը կազմելու և դրանք ներկայացնելու մեթոդական ցուցումներին համապատասխան:

4. Ծրագրի տեխնիկական առաջադրանքի և նախահաշվի (այսուհետ՝ ծրագրի նախագծային փաստաթղթեր) մշակումը պայմանագրային հիմունքներով իրականացնելու դեպքերում դրանց իրականացնողն ընտրվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

5. Ծրագրի նախագծային փաստաթղթերը հաստատվում են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի համար՝ ծրագիրն իրականացնող պետական մարմնի կողմից:

2) համայնքային բյուջեներից ֆինանսավորվող ծրագրերի համար՝ ծրագիրն իրականացնող համապատասխան համայնքի ղեկավարի կողմից:

6. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրի նախագծային փաստաթղթերը մինչև հաստատվելը ներկայացվում են այն համայնքներին, որոնց տարածքներում նախատեսվում է իրականացնել ծրագիրը: Սույն կետի դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության միջնաժամկետ ծախսային ծրագրերում ներառված գործող (շարունակական բնույթ ունեցող) ծրագրերի վրա:

7. Մինչև ծրագրի նախագծային փաստաթղթերի հաստատումը՝ համապատասխան մարմինը 15 օրվա ընթացքում իրազեկում է հասարակությանը՝

1) զանգվածային լրատվության (այդ թվում՝ էլեկտրոնային) միջոցներով (տեղական և հանրապետական ռադիո, հեռուստատեսություն, լրագիր):

2) ծրագրերի և նախագծերի ցուցադրման միջոցառումներով, հրապարակումներով, ինտերնետային կայքերում տեղադրմամբ:

3) հասարակական քննարկումներով:

8. Բնապահպանական փորձաքննության ենթակա ծրագրերի նախագծային փաստաթղթերի մասին հասարակայնությունն իրազեկվում է բնապահպանական փորձաքննության անցկացման համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ընթացակարգերի շրջանակներում:

9. Բոլոր դեպքերում ծրագիրն իրականացնողը պարտավոր է մինչև ծրագրի իրականացման սկիզբը, ինչպես նաև ծրագրի իրականացման ընթացքում համաձայնության գալ ծրագրի իրականացման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ հասցվելիք վնասների փոխհատուցման վերաբերյալ:

10. Սույն կարգի 6-րդ կետով սահմանված դեպքերում նախագծային փաստաթղթերի հանրային լսումները կամ քննարկումները, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը ծրագրերի նախագծերի հեղինակներին կամ համապատասխան մարմիններին իրականացվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33.1-ին հոդվածի պահանջներին համապատասխան:

11. Հաստատված նախագծային փաստաթղթերում փոփոխությունները կատարվում են սույն կարգով նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

12. Նախագծային փաստաթղթերի մշակման, համաձայնեցման և հաստատման ժամանակ ծագող վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Վ. Գաբրիելյան